ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ԱՊՐԻԼԻ 2024թվականի N 0521-Ա

ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2023թ.-ի նոյեմբերի 24-ին ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի և «ԳԱԳ-ՄԱՐԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ի միջև կնքվել է ապրանքների ձեռքբերման պայմանագիր: Այնուհետև ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո դեկտեմբերի 20-ին կնքվել է համաձայնագիր, որով ուժի մեջ է մտել ԱՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/14-2 ծածկագրով գնման պայմանագիրը: Քանի որ սահմանված ժամկետում մատակարարումները չեն կատարվել, պատվիրատուն որոշում է կայացրել միակողմանի ամբողջությամբ լուծել ԱՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/14-2 ծածկագրով գնման պայմանագիրը և մասնակցին հնարավորություն տալ վճարել պայմանագրի և որակավորման ապահովումները, սակայն սահմանված ժամկետում մասնակցի կողմից վճարում չի կատարվել, ուստի.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քանի որ ի հայտ են եկել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) պարբերության դրույթներով նախատեսված հիմքերը՝ «**խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը**», ուստի անհրաժեշտ է «ԳԱԳ-ՄԱՐԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 04247081, հասցեն՝ Ք. Վեդի, Կասյան փ. 26/9, 16) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Օրենքով սահմանված կարգով սույն որոշումը ներկայացնել լիազորված մարմին և մասնակցին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐՇԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ

2024թ. ապրիլի 16
ք. Արմավիր